«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտորի
ժամանակավոր պաշտոնակատար
________ Մ. Մուրադյան
«__» ________ 2025 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի՝ Անուշ Հովիկի Մովսիսյանի՝ «Հանրային ծառայության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությանում (տեսական-իրավական վերլուծություն)» թեմայով ԺԲ.00.01 «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնը, մասնակցությամբ՝ իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Յու. Թադևոսյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Հ.Ա.Ստեփանյանի, Ա.Գ.Սաֆարյանի և Ա. Ս. Մարգարյանի, քննարկեց Անուշ Հովիկի Մովսիսյանի՝ «Հանրային ծառայության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (տեսական-իրավական վերլուծություն)» թեմայով ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսումունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գի-տությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Ժամանակակից հայ հասարակության ներքին բարեփոխման գործընթացները իրավական պետության կայացման, քաղաքացիական հասարակության բնականոն զարգացման նպատակներով պայմանավորում են հանրային ծառայության ինստիտուտի հետազոտության արդիականությունը: Բացի այդ հանրային կառավարման արդյունավետությամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում ձևավորելու հանրային ծառայության ինստիտուտի զարգացման նոր կառուցակարգ: Ընդ որում, նման ընկալման առանցքը հանդիսանում է հանրային ծառայության համակարգի կատարելագործման գաղափարը: Կարևորելով հանրային

ծառայության համակարգի կայացմանն ու զարգացմանն ուղղված լայնածավալ բարեփոխումների իրականացումը, հեղինակը սույն աշխատանքի շրջանակներում փորձել է իրականացնել համալիր գիտագործնական հետազոտություն՝ ուղղված հանրային ծառայության համակարգում առկա օրենսդրական բացերի լրացման, հանրային ծառայության ընդունվելու որակական չափանիշների սահմանման, հանարային ծառայողների առաջընթացի խթանման և անձնական պատասխանատվության կիրառման հիմնախնդիրներին:

Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, տասներկու ենթագլուխ պարունակող չորս գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի այսպիսի կառուցվածքը, ընդհանուր առմամբ, համահունչ է այն խնդիրներին ու նպատակներին, որոնք իր առջև դրել է հեղինակը:

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում թեմայի հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակներն ու խնդիրները, գիտական ուսումնասիրության վիճակը, տեսական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, ինչպես նաև՝ պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության գործնական-տեսական, գործնական-կիրառական նշանակությունները, ատենախոսության փորձարկումը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Հանրային ծառայությունը որպես համալիր իրավական ինստիտուտ» վերտառությամբ գլխում հեղինակը ներկայացրել է, հանրային ծառայության ձևավորման նախադրյալները, զարգացման փուլերը, էությունը, սկզբունքները, տեսակները, բացահայտել հանրային ծառայության տեսակների առանձնահատկությունները:

Աշխատանքի երկրորդ գլխում, որը կրում է «Պետական ծառայության հիմնախնդիրները արդի ժամանակաշրջանում» խորագիրը, լուսաբանված են պետական ծառայությունը, դասակարգումը և փոխհարաբերությունը հանրային ծառայության մյուս տեսակների հետ: Միաժամանակ, հեղինակը իրականացրել է քննարկվող հիմնախնդրի վերլուծություն՝ անդրադառնալով պետական ծառայության առանձնահատկություններին, իրավական կարգավորման սկզբունքներին, արդի հիմնախնդիրներին և դրանց իրավական լուծումներին:

«Համայնքային ծառայության հիմնախնդիրները արդի ժամանակաշրջանում» խորագրով երրորդ գլխում հեղինակն ներկայացրել է համայնքային ծառայության էությունը, նշանակությունը և առանձնահատկությունները, նաև քննարկել է համայնքային ծառայության արդի հիմնախնդիրները և դրանց իրավական լուծումները:

Աշխատանքի չորրորդ գլխում, որը կրում է «Հանրային պաշտոններ զբաղեցնելու հիմնախնդիրները արդի ժամանակաշրջանում» խորագիրը, անդրադարձ է կատարվել «հանրային ծառայության պաշտոն», «հանրային պաշտոն», «հանրային ծառայող», «հանրային ծառայության մեջ գտնվող անձ» հասկացությունների հարաբերակցությանը, ներկայացվել է հանրային պաշտոնների դասակարգումը և դրանց առանձնահատկությունները, լուսաբանվել է հանրային պաշտոնների նշանակման և ազատման արդի հիմնախնդիրները:

Ատենախոսության եզրափակիչ մասում շարադրված են հետազոտության կատարման արդյունքում հեղինակի կողմից արված եզրահանգումները:

Գիտական հետազոտության վերաբերյալ ընդհանուր դրական կարծիքի հետ մեկտեղ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Գիտական նորույթի տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող չորրորդ դրույթը: Վերջինիս շրջանակներում հեղինակը ուշադրություն է հրավիրում հանրային ծառայողների վերապատրաստման դպրոցի ստեղծման, գիտելիքների ստուգման միասնական համակարգի ներդրման, հանրային ծառայողին փոխարինելու ժամանակահատվածում կատարված աշխատանքների համար փոխարինողի վարձատրության կառուցակարգի նախատեսման վրա: Հարկ է նկատել, որ թվարկված հետազոտության արդյունքներն ընդհանուր բնույթի տեսական դիտարկումներ են: Չթերագնահատելով ատենախոսի կողմից իրականացված հետազոտության արժեքը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ վերոհիշյալ մոտեցումը չի պարունակում գիտական նորույթի էական տարրեր:

2. Թերի է ատենախոսության գրականության ցանկի ձևավորումը: Մասնավորապես, ատենախոսության՝ «Հայաստանի Հանրապետության իրավական ակտեր» բաժնում ամբողջական ներկայացված չեն իրավական ակտերի համարները, Հայաստանի Հանրապետության պաշտոնական ակտերի տեղեկագրում հոդվածի համարը, իրավական ակտերի հղումների հերթական համարները և համապատասխան էջերը, բացակայում են էլեկտրոնային ռեսուրսի օգտագործման վերաբերյալ պատշաճ գրառումները:

Ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը, պայմանավորված են աշխատանքն առավել որակյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. «Հանրային ծառայության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (տեսական-իրավական վերլուծություն)» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգը և չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Անուշ Հովիկի Մովսիսյանը, արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.01-«Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսումունքների պատմություն» մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Անուշ Հովիկի Մովսիսյանի՝ «Հանրային ծառայության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (տեսական-իրավական վերլուծություն)» խորագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի պետ Ա. Գ. Սաֆարյանի կողմից:

Քննարկվել և հավանության է արժանացել ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի 2025 թ. մայիսի 2-ի նիստում, արձանագրություն թիվ 4 :

Ամբիոնի պետ Ա. Գ. Սաֆարյան

Ա. Գ. Սաֆարյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի վարչական աշխատանքների համակարգող պրոռեկտոր Ա. Է. Սուքիասյան